

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

أزتك جريدة يومية سياسية وأدبية - الدوة المسؤولة، إيشادرويشيان

1500 L.Ռ. 74ԳԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 167 (20923) ՉՈՐԻՔԸԱՐԹԻ, 26 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2001 10 ԷՁ

ՅՈՎԸԱՆՆԵՍ ՊՕՂՈՍ Բ. ՊԱՊԸ՝ ԸԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՐԸ

Հայաստանի նախագահ Ռոպայթի Քոչարեանի եւ Ամենայնի Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի հրաւերով երէկ Հայաստան հասաւ Հռոմի Յովհաննէս Պօղոս Բ. պապը:

Ղազախական օդանավը, որ պապին Ղազախստանի մայրաքաղաք Ասթանայէն Երեւան կը բերէր, «Ջուարթնոց» օդակայանէջք կատարեց յետմիջօրէի ժամը 1:00ին: Պապը զիմաւորեցին Հայաստանի նախագահ Ռոպայթի Քոչարեան, Ամենայնի Հայոց Գարեգին Բ. կաթողիկոս, Հայաստանի վարչապետը, խորհրդարանի նախագահը եւ այլ բարձրաստիճան պաշտօնատարներ:

Օդանավէն իջնելով, պապը համբուրեց հայկական հողը: Մատուցուեցաւ աւանդական աղու հաց: Հնչեցին Վատիկանի եւ Հայաստանի քայլերգները:

Ողջունելով պապին այցելութիւնը, նախագահ Քոչարեան ըսաւ. «Մենք մեծ խորհուրդ կը տեսնենք այն իրողութեան մէջ, որ այս այցելութիւնը ոեղի կ'ունենայ Հայաստանի մէջ քրիստոնէութեան իրրեւ պետական կրօն ընդունման 1700ամեակի տօնակատարութիւններու ընթացքին»: Նախագահը նաեւ նշեց, թէ Հայաստանն այս օրերուն կը նշէ իր անկախութեան վերածնունդի տասնամեա-

պտուղներով:

«Մենք կ'ողջունենք Վատիկանի եւ Հայ Առաքելական եկեղեցւոյ յարաբերութիւններուն սերտացումը, որ հիմնուած է քոյր եկեղեցիներու հարստացնող կապերու բազմադարեան աւանդութիւնները»:

Ապա խօսք



Ժամանում «Ջուարթնոց» օդակայան:



Պապը եւ Գախագահ Քոչարեան զրոյցի պահուն:

առաւ Ամենայնի Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը: Նշելով, որ պապին այցելութիւնը իրականացաւ այն պահուն, երբ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ համայն հայութիւնը կը տօնէ քրիստոնէութեան իրրեւ պետական կրօն ընդունման 1700ամեակի եւ Հայաստանի ու Արցախի անկախ

ութեան, քաղաքացիական եւ գլխուորական իշխանութիւններուն եւ գինք զիմաւորող դիւանագիտական բոլոր մարմիններուն: «Խօսքս ձեռքի ուղղելով, պրն. նախագահ, զնահատանքս եւ բարեկամութիւնս կը յայտնեմ ոչ միայն ձեր հայրենակիցներուն, որոնք կ'ապրին մայր երկրին, այլ նաեւ աշխարհացրիւ միլիոնաւոր հայերուն, որոնք հաւատարիմ կը մնան իրենց ժառանգութեան եւ ինքնութեան»:

Պապը յայտնեց, որ կաթողիկէ եկեղեցին կը բաժնէ քրիստոնէութեան իրրեւ պետական կրօն ընդունման 1700ամեակի անխորհրդի ու բարխութիւնը: Պապը նաեւ անդրադարձաւ Հայաստանի անկախութեան վերականգնումին, եւ Եւրոպական խորհուրդին Հայաստանի անդամակցութեան: «Ասոնք դժուար ժամանակներ են, բայց նաեւ ժամանակներ են, որոնք մարտահրաւէր կը կարողան ազգին եւ անոր կը ներշնչեն՝ քաջութիւն: Իւրաքանչիւր ոք պէտք է հաստատականութիւն որոշէ սիրել իր երկիրը եւ զոհաբերել իր անձը անոր բարգաւաճման եւ ժողովուրդի հոգեւոր ու նրութեան բարբոթութեան համար»:

Այնուհետեւ Յովհաննէս Պօղոս պապին բարի գալուստ մաղթեցին զայն զիմաւորող պետական պաշտօնատարները, օտար զիւանազէտները եւ հոգեւորականները: Հռոմի պապը եւ Ամենայնի Հայոց կաթողիկոսը ապա մեկնեցան Ս. Էջմիածին, ուր սրբազան հիւրին ի պատիւ տեղի

Շար.ը՝ էջ 3

ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ՄԷՁ

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՅԱՅՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԵՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ մեկնեցաւ Սէուտական Արաբիա, տեսակցութիւններ ունենալու համար Ֆահիտ թագաւորին, գահաժառանգ իշխան Ապտալա Պրն Ապտէյ Ալիպի եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներու հետ: Խորհրդակցութեանց առանցքը պիտի հանդիսանան միջազգային եւ շրջանային վարգաւորները:

Հարիրի երէկ յետմիջօրէին տեսակցեցաւ գահաժառանգ իշխան Ապտալալի հետ. անոնք քննարկեցին Միացեալ Նահանգներու դէպքերէն ետք ստեղծուած իրավիճակը:

Հարիրի այսօր՝ Չորեքշաբթի, կը վերադառնայ Պէյրութ:

ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԵ ՆՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ 10ԱՄԵԱԿԻՆ

ԸԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԸԱՄԱՅՆ ԸԱՅՈՒԹԵԱՆ

Կ'ԸՍԵ ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



(Լուսանկարները՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ)

Երէկ աւելի քան հինգ հազար հայեր ներկայ եղան Հայաստանի անկախութեան վերականգնումի 10ամեակի տօնակատարութեան եւ իրենց խանդավառ մասնակցութեամբ անդամ մը եւս հաստատեցին լիբանանահայութեան հաւատքը՝ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի եւ մէկ հայութեան նկատմամբ:

Հ. Յ. Դ. Լիբանանի Քարոզչական Յանձնախումբի կազմակերպութեամբ Երեքշաբթի, 25 Սեպտեմբրի երեկոյեան ժամը 8:00ին, «Շաղգոյեան» կեդրոնին մօտ դառնող կառուտան մէջ տեղի ունեցաւ Հայաստանի անկախութեան վերականգնումի 10ամեակին նուիրուած հանդիսութիւնը:

Ներկայ էին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, ՄԱՀԱՅՄԻ առեւտրապետ վերդուտ. Ժան Խանճեան, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւոր, ներքին եւ պաշտպանութեան յանձնաժողովի նախագահ, Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեան, երեսփոխան Ճօրճ Գասարճի, նախկին երեսփոխաններ Նուրիճան Տեմիրճեան եւ Ժաք Չուխատարեան, Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Երուանդ Փամպուլեան, Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը եւ անդամներ, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեան, Ազգային Վիճակագրութեան վարչութեան ընդհանուր տնօրէն դոկտ. Մարալ Կի-

տանեան, կենսոլորտի նախարարութեան ընդհանուր տնօրէն Պերճ Հաճեան, կեդրոնական քննիչ խորհուրդի ընդհանուր քննիչ Ժան Պէյեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մաւրյեան, Այնճարի քաղաքապետ Սեպուհ Սպայեան, ազգային միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ քաղաքացիներ:

Հանդիսութեան սկիզբը Հ.Մ.Ը.Մ.ի չեփորախումբը նուագեց Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները: Ապա Հ. Յ. Դ. Լիբանանի Քարոզչական Յանձնախումբին անունով բացման խօսքը կատարեց տոբթէլի Թաշճեան, որ հակիրճ կերպով անդրադարձաւ Հայաստանի անկախութեան ճանապարհին, ներքին եւ արտաքին ճակատներու վրայ հայութեան պայքարներուն:

Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական Կոմիտէի անունով խօսք առաւ Շահան Գանտահարեան: Անդրադառնալով անցնող տասը տարիներու ընթացքին հայկական անկախ պետականութեան ստեղծման եւ անոր մեկնակէտը հանդիսացող 28 Մայիս 1918ով կերտուած Հայաստանի անկախ Առաջին Հանրապետութեան անցած ճամբուն եւ այսօրուան կացութեան, ան ըսաւ. «Հայրենի պետական մտածողութիւնը, պետական համակարգն ու արտաքին թէ ներազգային խնդիրներու իր հաջեակարգը հետզհետէ խորսիւնց ազգային զաղափարախօնութեան հիմունքներուն վրայ: Հայապահպանման եւ Հայկական Յեղափոխութեան համար անսահման մարդուժ, տնտեսութեւ նահատակներ տուած արտասահմանի հայութիւնը

Շար.ը՝ էջ 10

Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ՆԵՊԻՉ ՊԸՐՐԻԻ



Խորհրդարանի Գախագահին մօտ:

Երէկ, Հայաստանի Ազգային Ժողովի ներքին եւ պաշտպանութեան յանձնաժողովի նախագահ, Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեան, ընկերակցութեամբ Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յ. Միխիլարեանի, կեդրոնական Կոմիտէի անդամ Յ. Թիւթէյեանի, ինչպէս նաեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Ս. Յովնանեանի, այցելեց խորհրդարանի նախագահ Ն. Պրորրիի: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Լիբանանի եւ Հայաստանի քաղաքական եւ խորհրդարանական յարաբերութիւնները, ինչպէս նաեւ՝ շրջանի կացութիւնը: Թղթակցներուն խօսք ուղղելով Վ. Յովհաննիսեան ըսաւ, թէ այսօր, երբ շրջանը կը դիմագրաւէ որոշ վտանգներ, անհրաժեշտ է յաճախակի դարձնել նման հանդիպումները՝ նկատի ունենալով, որ Լիբանանը եւ Հայաստանը Մերձաւոր Արեւելքի մէջ կրնան դառնալ կայունութեան

Շար.ը՝ էջ 3

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ



Արամ Ա. Վեհափառին հետ:

Երէկ երեկոյեան Հայաստանի Ազգային Ժողովի ներքին եւ պաշտպանութեան յանձնաժողովի նախագահ, Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեան, ընկերակցութեամբ Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Երուանդ Փամպուլեանի, Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեանի, Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յ. Միխիլարեանի եւ կեդրոնական Կոմիտէի անդամ Յ. Թիւթէյեանի, այցելեց Արամ Ա. կաթողիկոսին, Անթիլիաս:

Հանդիպման ընթացքին արծարծուեցան քրիստոնէացման 1700ամեակի ձեռնարկները, ինչպէս նաեւ

Շար.ը՝ էջ 3

ՄԱՀԱԶԴ

Յաւով կը գուծենք վաստակաշատ դաշնակցական եւ Հ. Յ. Դ. Բիւրոյի նախկին անդամ

ԸՆԿ. ԽԱԺԱԿ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեւանի մէջ, 25 Սեպտեմբր 2001ին:

Հ. Յ. Դ. ԲԻՐՐՈ

ՊԵՅՐՈՒԹԻ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ՝ ՄԵԾ ԹԻՒՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՊԱՒԵՆՆԵՐ

Յառաջիկայ Հոկտեմբերին կայանալիք Պէյրուժի շարժապատկերի փառատօնին ընթացքին պիտի ցուցադրուին տարբեր սեռերու պատկանող 34 ժապաւէններ: Պիտի ներկայացուին միջազգային 21 ժապաւէններ, լիբանանեան եւ հայկական 7 կարճ ժապաւէններ, «Լիբանանեան եւ հայկական վաւերագրական ժապաւէններ» պիտակով բնորոշուող 15 ժապաւէններ, ինչպէս նաեւ՝ փորձառական ժապաւէն մը: Նաեւ պիտի ցուցադրուին սփիւռքահայ կարճ եւ վաւերագրական 6 ժապաւէններ, որոնք ունին յետհայեցողական բնոյթ:

Լիբանանի եւ Հայաստանի կողքին, փառատօնին պիտի մասնակցին միջին արեւելեան եւ հիւսիսափրիկեան բազմաթիւ երկրներ, ինչպէս Ալճերիա, Եգիպտոս, Թունիզ, Սուրիա, Թուրքիա եւ Իրան:

Փառատօնին բացումը պիտի կատարուի 3 Հոկտեմբերին «ԵՌՆԵՄՔՕ»-ի պալատին մէջ: Ժապաւէնները պիտի ցուցադրուին «Սոնէք»-ի սրահներուն եւ «Թէաթր» Պերիք»-ի մէջ:

ԵԱԼԹԱՅԻ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻՆ ԱԼՊԷՐԹ ՄԿՐՏԶԵԱՆԻ «ՈՒՐԱԽ ՕԹՈՊԻՒՍ» ԺԱՊԱՒԵՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄՐՑԱՆԱԿԻ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ

Հայաստանի շարժապատկերի բեմադրիչներու միութեան նախագահ Սերգէյ Իսրայէլեան Կինոյի տան մէջ կայացած մամուլի ասուլիսի մը ընթացքին ըսած է, թէ վերջերս Եալթայի մէջ կայացած միջազգային շարժապատկերի եւ պատկերասփիւռի համախմբումին Ալպէրթ Մկրտչեանի «Ուրախ Օթոպիւս» ժապաւէնը արժանացած է բարձրագոյն մրցանակին՝ «Կրան Փրի»-ին:

Վեց առաջին մրցանակներէն երկուքին տիրացած են հայ հեղինակներու ժապաւէնները, որոնցմէ մէկն է լրագրող, պատկերասփիւռի հաղորդաշարներու հեղինակ Յարութիւն Ագարեանի 18 վայրկեաննոց «Պարլի քեւեռով» վաւերագրական ժապաւէնը եւ միւսը՝ Բազրատ Սիմոնեանի ու իղիկ Գէորգեանի «Ներկայակոչում» 20 վայրկեաննոց ժապաւէնը:

Ս. Իսրայէլեան աւելցուցած է, թէ աւելի ուրախալի է այն երեւոյթը թէ մրցանակի արժանացողները կը ներկայացնեն երկու՝ աւագ եւ երիտասարդ սերունդներ:

«Հայկ» շարժապատկերի սթիւտիոյ տնօրէն Ռուբէն Գէորգեան, որ նաեւ Եալթայի շարժապատկերի համախմբումի դատական կազմին մէջ եղած է, ըսած է, թէ սկզբնական հանգրուանին համար ներկայացուած են 1400 ժապաւէններ, որոնցմէ ընտրուած են 27 երկիրներէ 10 եւ 52 վաւերագրական ժապաւէններ եւ հաղորդաշարեր: Ձեռնարկին ներկայ եղած է նաեւ Ռուսիոյ Պետական Տումայի նախագահ Կենատի Սեյեգնիով:

«Կրան Փրի» մրցանակին արժանացած են նաեւ Խորթըրիստանէն ներկայացուած ժապաւէն մը եւ հաղորդաշար մը:

Հայ ստեղծագործողներու այս մրցումին մասնակցելու համար աջակցութիւն ներկայացուցած է լրագրողներու միջազգային միութեան քարտուղար Աշոտ Ջազոյեան: Համախմբումը Ռուբէն Գէորգեանին շնորհած է «Ալեքսանտր Տովժենքոյի» անուան մետալը:

Ալպէրթ Մկրտչեան նշած է, թէ «Ուրախ Օթոպիւս» բազմաթիւ փառատօներու մասնակցելու հրաւերներ ստացած է: Իսկ Պերլինի շարժապատկերի շուկայէն ետք, ժապաւէնը գնելու առաջարկներ ներկայացուած են Աւստրալիայէն, Ֆինլանտայէն, Քորէայէն եւ Աւստրիայէն: Ժապաւէնը ցուցադրուած է բազմաթիւ երկիրներու մէջ եւ յայն արձագանգ գտած է օտար մամուլին մէջ:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԸ Կ'ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԻ

Իսրայէլի Գիտութիւններու եւ ընկերային գիտութիւններու ակադեմիայի, Հայաստանի Գիտութիւններու ակադեմիայի, Հայաստանի Գիտութիւններու ակադեմիայի եւ Եւրոպական համալսարանի հայագիտութեան ծրագրի ճովաւորութեամբ Երուսաղէմի մէջ սկսած է Երուսաղէմի հայերու բարբառին ձայնագրութեան աշխատանքները՝ զայն պահպանելու նպատակով: Բարբառը Երուսաղէմի մէջ իր լայն գործածութիւնը սկսած է կորսնցընել յատկապէս Հայկական Յեղասպանութենէն ետք, երբ տասնեակ հազարաւոր հայ գաղթականներ հասած են Երուսաղէմ: Քաղաքին մէջ հաստատուած է Ս. Թարգմանչաց վարժարանը, որուն ուսուցման լեզուն արդի աշխարհարար է, եւ որ եղած է նոր սերունդին խօսակցական լեզուն: Ներկայիս Երուսաղէմի հայերուն հին սերունդէն քանի մը հոգի պահպանած են բարբառը:

Բարբառին ձայնագրման եւ պահպանման աշխատանքը ամբան ընթացքին իրականացուցած է ղոկտ. Թ. Վան Լինթ, որ իրեն Երուսաղէմի հայոց Թորգոմ Բ. պատրիարքին հիւրը, ապրած է հայկական թաղամասին մէջ: Ան Երուսաղէմի բարբառով խօսողներու հետ իր կատարած բազմաթիւ հարցազրույցները արձանագրած է ձայնասկանաւորներու վրայ: Կատարւած աշխատանքը ուսումնասիրութեան եւ վերլուծման նպատակով պիտի յանձնուի ղոկտ. Վոյի:

Թէեւ ծրագիրը տակաւին ամբողջական չէ, սակայն հաւաքուած նիւթերը կ'երաշխարհեն բարբառին պահպանումը: Նշենք, որ այս բարբառը նախապէս երբեք չէ ուսումնասիրուած:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈԶԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՇԱՐԼ ԱԶՆԱԻՈՒՐԸ

24 Սեպտեմբերին Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան ընդունեց աշխարհահռչակ երգիչ Շարլ Ազնաւուրը:

Ազնաւուր հանդիպումին ընթացքին ըսած է, թէ ինք չափազանց ուրախ է Հայաստանի մէջ գտնուելուն եւ իր ժողովուրդին հետ տօնակատարութիւններուն մասնակցելուն համար:

Նախագահին մամուլի գրասենեակը կը յայտնէ, թէ նախագահը եւ Ազնաւուրը հանդիպումին ընթացքին խօսած են երկրի ընկերային - տնտեսական վիճակին եւ անոր բարելաւման համար տարուող աշխատանքներուն մասին: Շ. Ազնաւուր ըսած է, թէ իր վերջին այցելութենէն ետք (հինգ տարի առաջ) մեծ փոփոխութիւններ տեղի ունեցած են Հայաստանի մէջ: Փոխւած են Հայաստանի իրավիճակը եւ մարդոց տրամադրութիւնը. այս հանգամանքը յատկապէս զգալի է աղէտի գոտիին մէջ:

Ռոպէրթ Քոչարեան համառօտ ձեւով ներկայացուցած է աղէտի գոտիի վերականգնման առնչուող աշխատանքները: խօսուած է նաեւ «Ազնաւուր» Հայաստանին՝ հիմնադրամին միջոցով իրականացած ծրագիրներուն մասին: Ազնաւուր նաեւ անդրադարձած է ապագայ ծրագիրներուն:

Ռոպէրթ Քոչարեան ըսած է, թէ անդնահատելի են Ազնաւուրին ծառայութիւնները, իր արուեստին ու գործունէութեան ճամբով Հայաստանը ըստ արժանւոյն ներկայացնելու ուղղութեամբ:

ԳԻՒՄՐԻԻ ՄԷՋ ՁԵՏԵՂՈՒԵՑԱԻ ՇԱՐԼ ԱԶՆԱԻՈՒՐԻ ԱՐՁԱՆԸ

22 Սեպտեմբերին Գիւմրիի մէջ տեղի ունեցաւ աշխարհահռչակ երգիչ եւ երգահան Շարլ Ազնաւուրի արձանի հանդիսաւոր լազուումը՝ անոր ներկայութեամբ:

Յայտնենք, թէ արձանի տեղադրման վայր ընտրւած է Աստղի հրապարակը, ուր կիսատ մնացած է մեծ հայրենականին նուիրուած յղթակամարը: Քանդակին հեղինակն է գիւմրեցի գործարար Գալիկ Պետրոսեան:

Բացման հանդիսութեան ընթացքին Շիրակի մարզպետ Ֆելիք Փիրումեան բարձր գնահատած է աղէտի գոտիի վերականգնման աշխատանքներուն մէջ Ազնաւուրի կատարած ծառայութիւնները:

Ապա հրապարակուեցաւ Գիւմրիի աւագանիին որոշումը՝ Աստղի հրապարակը Շարլ Ազնաւուր վերանորոգելու եւ անոր Գիւմրիի պատուաւոր քաղաքացիի կոչում շնորհելու մասին:

Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ ԳԻՒՄՐԻԻ ՄԷՋ

21 Սեպտեմբերին Ս. Փեթերսպուրկի նահանգապետ Վլատիմիր Եաքովլեւ այցելեց Գիւմրի, որուն Անկախութեան հրապարակին վրայ Հայաստանի անկախութեան վերականգնման 10րդ տարեդարձին նուիրւած հանդիսութեան մասնակցելէ ետք, ան այցելեց Գիւմրիի մէջ հաստատուած Ռուսիոյ գինեալ ութերու խաբիսիք:

Վ. Եաքովլեւ շրջագայեցաւ քաղաքին մէջ, ծանօթացաւ քաղաքի վերականգնման ընթացքին եւ այցելեց Պուշկինի անուան դպրոցը, որուն պատմաճարտարապետական արժէք ներկայացնող շէնքը կը վերանորոգուի Ռուսիոյ եւ Հայաստանի կառավարութիւններու ֆինանսաւորումով:

Վ. Եաքովլեւի կ'ուղեկցէր Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպան Անաթոլի Տրիւբով:

«ԶՈՒԱՐԹՆՈՅ»Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՅՈՒՇԱԳԻՐ ԿԸ ՍՏՈՐԱԳՐՈՒԻ

Արժանութիւնն աւելցնելու նպատակով Գիւմրիի գործարար եւ բարերար Էտուարտ Էռնէկեանի եւ Հայաստանի կառավարութեան (իդէմ քաղաքացիական օդանավորութեան գլխավոր վարչութեան) միջեւ ստորագրուած է յուշագիր մը, որուն համաձայն, բարերարը մտադիր է 50 տարի հաւատարմագրութեան տարբերակով կառավարել «Զուարթնոց» միջազգային օդակայանը: Էռնէկեան մտադիր է նաեւ այդ տարիներուն ընթացքին 50 միլիոն տոլարի ներդրում կատարելու օդակայանին մէջ:

Ըստ քաղաքացիական օդանավորութեան գլխավոր վարչութեան լրատուական ծառայութեան, մեկնելով այս յուշագիրի տրամադրութիւններին, յառաջիկային պիտի մշակուի եւ պիտի ստորագրուի պայմանագիր մը, որուն մէջ

Ա Յ Ի Լ

ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ԱՊԱՇՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

85\$

●SOS FREE OF CHARGE
ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԶՐԻ

ՀԱՍՅԷ.- ԱՖԵՏԻ ԺԵՆԸ Բ. ՅԱՐԿ
ՀԵՌ. 01-242556 եւ 01-242557

ԵՐԵՒԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՈՒՄ

Կիրակի, 23 Սեպտեմբերին, ձեռամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի, տեղի ունեցաւ Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ օծումը: Արարողութիւնը ընթացաւ հայ եկեղեցւոյ նուիրական կարգին համաձայն: Նախօրօք եկեղեցի բերուած եւ տեղադրուած էին Ս. Գրիգոր Լուսաւորիչի մասունքները:


Ս. միւսուրով օծուեցան խորանը, Ս. Սեղանը, 16 սիւնները, որոնց հիմքին մէջ դրուած են օրհնուած քարերը, եւ՝ երեք գլխաւոր դռները: Սիւներէն աւելն մէկը առաքեալի մը անունով է:

Օծման արարողութեան ներկայ էին՝ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան, Լեւոնային Ղարապաղի Հանրապետութեան նախագահ Արկադի Ղուկասեան, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արմէն խաչատրեան, վարչապետ Անդրանիկ Մարգարեան, Լեւոնային Ղարապաղի Ազգային ժողովի նախագահ Օյէկ Եսայեան, վարչապետ Անուշահան Դանիէլեան, Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորներ, կառավարութեան անդամներ, ինչպէս նաեւ՝ Ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ Շարլ Ազնաւուր եւ հոծ բազմութիւն մը:

Արարողութեան մասնակից հոգեւոր առաջնորդներու, ուսումնական եկեղեցւոյ եւ իր անունով եկեղեցւոյ օծումը շնորհաւորեց Մոսկուայի եւ համայն Ռուսիոյ պատրիարք Ալէքսի Բ.:

Այնուհետեւ խօսք առաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը, երախտագիտութեամբ յիշատակելով բոլոր այն մարդիկը՝ բարերարները, նախագծողը, շինարարները, որոնք իրենց աւանդը բերած են նոր եկեղեցւոյ կառուցման:

Հանդիսաւոր արարողութենէն ետք մատուց-



Եկեղեցւոյ հայրապետական լազուումը Գարեգին Բ. Ս. պատարագ: Պատարագ լազուումը:

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՇԵՍՏԻՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՌԵՍՈՒՄՆԱԿԱՆ

2001-2002 ՏԱՐԵՇՐԶԱՆ

●ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

2001-2002 ուսումնական տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ կը շարունակուին առաւօտեան ժամը 8:00էն 12:00 (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն) հետեւեալ բաժանմունքներուն համար՝ իրենց յարակից բաժիններով:

Առեւտրական գիտութիւն (Commercial Science):

Համակարգիչի գիտութիւն (Computer Science):

Ներքին յարդարանք (Interior Design):

Նորեկ աշակերտներէն կը խնդրուի իրենց հետ բերել. - Ինքնութեան թուղթի լուսապատճէն: - Վերջին տարուան վիճակացոյցը եւ բարի վարույց վկայագիր: - Պաշտօնական հաստատագիր՝ արաբերէնով, պետական թիով վաւերացուած: ●ՎԵՐԱՄՈՒՏ - 25 Հոկտեմբեր 2001ին: ●ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ տեղի կ'ունենան 2 եւ 3 Հոկտեմբեր 2001ին: Մանրամասնութեանց համար դիմել քարտուղարութեան: Նոր Ամանու, Տորա հեռ. 01-263955 - 257396 - 03-817430 E-mail: ants@dm.net.lb

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՇԵՍՏԻՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ



ΦΟΙΤΗΤΗΣ

Թիւն պիտի ունենան, ինչ որ չատ վտանգաւոր է:
Վարչակարգը, ըստ Երեւոյթի, կը պատրաստ
ծրագիր մը, որ կ'ընդգրկէ օդուժ եւ հետեւակ գործ
ՄԱՀՔԸԼ Բ. ՃՈՐՏԷ
Ծարք' Ե

(*) Վերոյիշեալ յայտագիրները ենթակալ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



ՓԻՆԿ ՓՈՆԿ

ԼԻԶԱ ՊԱՐԻԿԵԱՆ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ

Երեկ, կեսօրից ետք ժամը 3:00ին Անդրանիկի դաշտին վրայ տեղի ունեցավ Լիբանանի փինկ փոնկի անհատական աղջկանց և ախտաբանական մրցումը՝ Հ. Մ. Բ. Մ.ի մարզիկ Լիզա Պարիկեանի և Դատա Քլեյն-լաթի միջև: Լիզա Պարիկեան անգամ մը եւս յաջողեցավ իր գերակայությունը փաստելու և հանդիսանալ Լիբանանի ախտաբանական ախտաբանական մրցումին 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով իր մրցակիցը:

Այսպիսով, Հ. Մ. Բ. Մ. յաջողեցավ տիրանալ անհատական աղջկանց տիտղոսին եւ խառն զոյգի տիտղոսին: Նշենք, թէ երկու օր առաջ (Երկուշաբթի) Լարա Քէչեպաշեան - Ռազմիկ Շեմէմեան զոյգը տիրացած էր խառն զոյգի տիտղոսին, 2-0 արդիւնքով պարտութեան մատնելով ետք Լարիսա Շըհէյա - Մոհամէտ Հապաշ զոյգը:

Հ. Մ. Բ. Մ.ի մարզիկները այժմ պիտի սկսին պատրաստուիլ յառաջիկայ Հոկտեմբեր 7ին 14 Ղապիի դաշտին վրայ տեղի ունենալիք Արաբական ախտաբանական խառն զոյգի մրցաշարին: Հ. Մ. Բ. Մ. մրցաշարին կը մասնակցի

տասը մարզիկով՝ հինգ տղաք եւ հինգ աղջիկներ: Նշենք, թէ աղջկանց կազմին միացած է հայրենի մարզիկ Արմինէ Մաքսիմեան, իսկ տղոց կազմին՝ իրանահայ Արման Պոլպոլեան:

Ռազմիկ Շեմէմեան եւ Լարա Քէչեպաշեան



Հ. Մ. Բ. Մ.ի մարզիկները՝ իրենց շահած բաժակներով: Չախէն Գ.Ն. Լեւոնյան, Լիզա Պարիկեան, Լարա Քէչեպաշեան, Բաքմի Մուհեմեդեան եւ Ռազմիկ Շեմէմեան:

ՍՊՈՐՏԻՎ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐԻՏ

ՊԱՐՍԵԼՈՆԱ ԵՒ ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ՝ ՀԱՄԵՏ ԿԱԶՄԵՐՈՒ ԴԵՄ ՎԻՃԱԿՈՒԵՑԱՆ

Երեկ փեղի ունեցավ Սպանիոյ բաժակի (ծանօթ Թագաւորի Բաժակ անունով) մրցաշարին վիճակաւորութիւնը, որուն ընթացքին Պարսելոնա եւ Ռեալ Մատրիտ իրենց դէմ ունեցան համեմատ կազմեր, որոնք մաս կը կազմեն Գ. դասակարգին. Փայալա Խան-փիա իր դաշտին վրայ յաջողիկ Գ. դասակարգին հաշիւով Մատրիտը, իսկ Ֆիլիպինէս Պարսելոնան:

Իր կարգին, բաժակակիր Ռեալ Մատրիտն ալ իր դէմ յաջողիկ Գ. դասակարգին մաս կազմող Լոկոմոտիւրը, մրցումը փեղի յաջողիկ արդիւնքով վերջինին դաշտին վրայ: Նշենք, թէ բոլոր մրցումներն ալ փեղի յաջողիկ ունեցան Հոկտեմբեր 10ին, քացի Ֆիլիպինէս - Պարսելոնա եւ Մատրիտ Լոնտրո - Տեփոթիս Բորուս մրցումներէն, որոնք փեղի յաջողիկ ունեցան Նոյեմբեր 7ին:

«ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ»-Ի ՄՐՅԱՇԱՐԻՏ

ՊԱՐՍԵԼՈՆԱ ԵՒ ՄԱՆՉԵՍԹԵՐ ՊԱՐՏՈՒԵՑԱՆ

«ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ»-ի ֆուտբոլի մրցաշարի Ա. հանգրուանին, երեկ տեղի ունեցան ութ ճակատումներ՝ Ե., Զ., Է., Ը. Ե. խմբակներէն ներս: Նախքան մանրամասնութիւնները նշենք, թէ այսօր եւս տեղի կ'ունենան ութ այլ ճակատումներ՝ Ա., Բ., Գ. Ե. Դ. խմբակներէն ներս (տեսնել՝ ստորին տրուած յայտագիրը):

Է. խմբակէն, Սպանիոյ մէջ Տեփոթիս Բորուսն արժանագրեց կարեւոր եւ դժուար յաղթանակ մը, երբ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Մանչեսթըր Յունայթըդը, իր յաղթանակը կերտելով վերջին չորս վայրկեաններուն, շնորհիւ Ուոլթըր Փանտիանիի (86րդ) եւ Նուրիտինի Նալպէի (89րդ) նշանակած կողմէն: Ա. կիսախաղին, անգլիացիք 1-0 արդիւնքով յաղթանակեցին շնորհիւ Փոլ Սքոլլիի նշանակած կողմին (40րդ):

Լիոն Թուրքիայէն 1-0 արդիւնքով յաղթանակեց Լարսիս Գերմանիայէն, հակառակադոր Պայէր Լեւերքուզընի դէմ տեղի ունեցած մրցումին, անհիշատակ Ա. կիսախաղին 1-0 արդիւնքով յաղթանակեցին, շնորհիւ Լուիս Էնրիքէի կողմէ նշանակուած կողմին (22րդ): Գերմանական կազմը իր կողմը

նշանակեց 53րդ եւ 69րդ վայրկեաններուն: Իր կարգին, Պայէրն Միւնխի կարեւոր յաղթանակ մը արժանագրեց, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով Սպարտակ Մոսկուան, հասան

նշանակեց 53րդ եւ 69րդ վայրկեաններուն: Իր կարգին, Պայէրն Միւնխի կարեւոր յաղթանակ մը արժանագրեց, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով Սպարտակ Մոսկուան, հասան

նշանակեց 53րդ եւ 69րդ վայրկեաններուն: Իր կարգին, Պայէրն Միւնխի կարեւոր յաղթանակ մը արժանագրեց, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով Սպարտակ Մոսկուան, հասան

նշանակեց 53րդ եւ 69րդ վայրկեաններուն: Իր կարգին, Պայէրն Միւնխի կարեւոր յաղթանակ մը արժանագրեց, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով Սպարտակ Մոսկուան, հասան

նշանակեց 53րդ եւ 69րդ վայրկեաններուն: Իր կարգին, Պայէրն Միւնխի կարեւոր յաղթանակ մը արժանագրեց, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով Սպարտակ Մոսկուան, հասան

նշանակեց 53րդ եւ 69րդ վայրկեաններուն: Իր կարգին, Պայէրն Միւնխի կարեւոր յաղթանակ մը արժանագրեց, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով Սպարտակ Մոսկուան, հասան

նշանակեց 53րդ եւ 69րդ վայրկեաններուն: Իր կարգին, Պայէրն Միւնխի կարեւոր յաղթանակ մը արժանագրեց, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով Սպարտակ Մոսկուան, հասան

նշանակեց 53րդ եւ 69րդ վայրկեաններուն: Իր կարգին, Պայէրն Միւնխի կարեւոր յաղթանակ մը արժանագրեց, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով Սպարտակ Մոսկուան, հասան

Սալիհամիժի (16րդ) եւ 74րդ) նշանակեց Պայէր-ճիովանի Էլպէր (41րդ եւ նի կողմը):

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները.

● Ե. խմբակ

Ռոզենպորկ (Նորվեգիա) -

Եուրեմոն (Իտալիա) 1-1

Սելթըր (Սկոտլանդ) - Փորթո (Փորթուգալ) 1-0

● Զ. խմբակ

Ֆեներպահչէ (Թուրքիա) - Լիոն (Ֆրանսա) 0-1

Պայէր Լեւերքուզըն (Գերմանիա) -

Պարսելոնա 2-1 (Սպանիա)

● Է. խմբակ

Տեփոթիս Բորուս (Սպանիա) -

Մանչեսթըր Յունայթըտ (Անգլիա) 2-1

Լիլ (Ֆրանսա) - Օլիմպիա (Յունաստան) 3-1

● Բ. խմբակ

Սպարտակ Մոսկուա (Ռուսիա) -

Պայէրն Միւնխի (Գերմանիա) 1-3

Սփարթա Փրակա (Չեխիա) -

Ֆլէյմնորտ Ռոթերտամ (Հոլանտա) 4-0

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.

● Ա. խմբակ

Ռեալ Մատրիտ (Սպանիա) - Անտալեթ (Պելլիքիա)

Ա. Էս. Ռոմա (Իտալիա) - Լոքոմոտիւ Մոսկուա (Ռուսիա)

● Բ. խմբակ

Պոսիսթա (Փորթուգալ) -

Պորուսիա Տորթմունտ (Գերմանիա)

Լիվերպոլ (Անգլիա) - Տիմա (Ռուսիա)

● Գ. խմբակ

Փանթիոնայթըտ (Յունաստան) - Արսենալ (Անգլիա)

Շալթ (Գերմանիա) - Մայորթա (Սպանիա)

● Դ. խմբակ

Փ. Ս. Վ. Այնտրոպ (Հոլանտա) -

Լաքո Ռոմա (Իտալիա)

Լանթ (Ֆրանսա) - Կալաթասարայ (Թուրքիա)

Ստորեւ՝ դասաւորումը.

● Ե. խմբակ

1.- Եուրեմոն 4 (4-3)

2.- Սելթըր 3 (3-3)

3.- Փորթո 3 (2-2)

4.- Ռոզենպորկ 1 (2-3)

● Զ. խմբակ

1.- Պայէր Լեւերքուզըն 6 (3-1)

2.- Պարսելոնա 3 (4-2)

3.- Լիոն 3 (1-1)

4.- Ֆեներպահչէ 0 (0-4)

● Է. խմբակ

1.- Տեփոթիս Բորուս 4 (4-3)

2.- Լիլ 3 (3-2)

3.- Մանչեսթըր Յունայթըտ 3 (2-2)

4.- Օլիմպիա 1 (3-5)

● Բ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

● Դ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

● Դ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

● Դ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

● Դ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

● Դ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

● Դ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

● Դ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

● Դ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

● Դ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

● Դ. խմբակ

1.- Սփարթա Փրակա 4 (4-0)

2.- Պայէրն Միւնխի 4 (3-1)

3.- Սպարտակ Մոսկուա 1 (3-5)

4.- Ֆլէյմնորտ Ռոթերտամ 1 (2-6)

ՀԵԾԵԼԱՐՈՒՄ. ՍՊՈՐՏԻՎ ԴԱՐԱՆ

ՔՈՆԻՔԵՆԻ՝ 16ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԲԱՆՏԱՌՈՐԸ

Օրուան մը հանգիստէ ետք, երեկ տեղի ունեցավ Սպանիոյ չրջագրերին 16րդ հանգրուանը՝ Ալբոյէն Միւնխի (153,5 քմ.), որ վերջ գտավ չէիս Թոմաս Գոնզալէսի յաղթանակով. ան ժամանան գլխ հասարակագրերով՝ 3 ժամ 11 վայրկեան եւ 33 երկվայրկեան արդիւնք մը, իր ետին գտնուող աւելի քան 20 հեծելանորդներուն նման:

Կր կարծուէր, որ 16րդ հանգրուանին տիտղոսին տիրացող պիտի ըլլայ Քարլոս Սասթրէ, նկատի ունենալով, որ ան կը գտնուէր առաջին դիրքին վրայ, 16 երկվայրկեանի առաւելութիւն մը ունենալով իր ետին գտնուող մրցակիցներուն վրայ: Սակայն անակնկալօրէն ան կորսնցնելով իր հաւասարակը՝ Ռոնթիլը ունեցավ հեծանիւի արկած մը եւ ինկաւ գետին, վիրաւորելով իր աջ ձեռքը:

Երկրորդ հանգիստեցաւ սպանացի Տաւիտ Էչեպերիա, իսկ երրորդ՝ Անխէլ Էնո (Սպանիա):

Ընդհանուր դասաւորման մէջ սպանացի Օսքար Սեւիլլա (Սպանիա), որ հանգիստեցաւ 6րդ, այժմ 25 երկվայրկեանի առաւելութիւն մը ունի 2րդ դիրքը գրաւող իր ազգակիցին՝ Անխէլ Քասերոյի վրայ, որ հանգիստեցաւ 12րդ:

Այսօր տեղի ունեցան 17րդ հանգրուանը՝ Միւնխի Ալպասթէ (159,5 քմ.):

Ստորեւ՝ 16րդ հանգրուանին արդիւնքները.

1.- Թոմաս Գոնզալէս (Չեխիա)

Տոմո - Ֆարմ Ֆրայթ 3 ժամ 11' 33"

2.- Տաւիտ Էչեպերիա (Սպանիա)

Էնոսթալթէ (նոյնը)

3.- Անխէլ Էնո (Սպանիա) Միլանեկա (նոյնը)

4.- Պէպո Զպերկ (Չեխիա)

Ռապուպա (նոյնը)

5.- Իկոր Փուկասի (Մոլտաւա) Սաէթո (նոյնը)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՌՈՐՈՒՄ

1.- Օսքար Սեւիլլա (Սպանիա)

Քէյմէ 55 ժամ 4' 58"

2.- Անխէլ Քասերո (Սպանիա) Ֆեթիմա 25" ուշ

3.- Խուան Միլիկ Մեթաւո (Սպանիա)

Իպանեթո 2' 02" ուշ

4.- Ռոպերթո Հերա (Սպանիա)

Էն. Էս. Փոսթալ 2' 20" ուշ

5.- Տաւիտ Փլակա (Սպանիա)

Ֆեթիմա 3' 31" ուշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԵՎՈ

